ՓՈՂՆՋ

ԹԻՒ 1246 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ — 1878 ՅՈՒՆՎԱՐ 25

ԱԶԳԱՅԻՆ

Եւրոպական-Տաճկաստանի կողմերէն մայրաքաղաքս գաղթող մահմետական ժողովրդեան և մանաւանդ չերքէսաց բնակութեան որոշման խնդիրը՝ որ ինչպէս օսմանեան խորհրդարանին, նոյնպէս և մեր Ազգին և մանաւորապէս եկեղեցական Հարց ուշադրութեան առարկայ եղած էր, բաւական պարզուած կերեւի։ Ինչպէս ծանուցած էինք մեր նախորդ թերթովը, արդէն որոշեալ եկեղեցական պատգամաւորութիւնն երկուշաբթի Ս. Պատրիարք Հօր բնակարանն երթալով՝ նորին սրբազնութեան ուշադրութիւնը և ազգու միջոցներու անյապաղ գործադրութիւնը խնդրեց։ Նոյն ինքն Ս. Պատրիարք Հայրն ալ խոստովանելով սոյն խնդրոյն արդարև խորին ուշադրութեան արժանի ըլլալը, յայտարարեր է թէ ընդհանուր ներողութիւն պիտի հրատարակուի և գաղթական ժողովուրդը պիտի դառնան երթան իրենց տեղերը, իսկ չերքէսք մեծաւ մասամբ Ափրիկեան-Ցրիպօլսոյ կողմերը պիտի ղրկուին բնակութեան համար։ Այսու ամենայնիւ, կըսեմք թէ Ս. Պատրիարքը յատկապէս գրեր խնդրեր է կայսերական կառավարութենէն, որ չերքէսներն բոլորովին հեռի պահուին Հայաբնակ գաւառներէ, և եթէ կարելի է՝ արդէն գտնուածներն ալ ուրիշ յարմար տեղեր զետեղուին։ Գոհութեամբ կտեսնուի, որ նոյն իսկ կայսերական կառավարութիւնն ալ այս մասին ամենայն ուշադրութիւն ընծայած է և կընծայէ, մեծ հոգ առնելով և հսկելով նոցա բնակութեան՝ ղգաստութեան և ուղղութեան համար։ Վերջին պատերազմը լաւ փորձաքար մ'եղած է՝ չերքեսաց վարքն ու բարքը ճշդիւ արտայայտելու համար, և տարակոյս չկայ թէ այսուհետև բնա՛ւ երես չպիտի գտնեն նոքա ո՛չ կառավարութենէն և ո՛չ ժողովրդէն, և տարակոյս չկայ թէ այսուհետև նոցա աւարառու ու խողխողող ճիրաններն չպիտի կրնան մերձենալ դա՛ռըն և քրտնաջան ժողովրդեան կեանց, ընչից ու պատուոյն։ Կիմանանք, թէ Գանտրմայի մէջ կայսերական կառավարութեան կողմանէ արդէն զինու զօրութեամբ ապդու դաս մը տրուեր է այս մարդոց։ Շատ ուրախ եմք, որ մեր տաճիկ պաշտօնակիցք ալ թէև ուշացայց վերջապէս զգացած են և կզգացունեն՝ այս մարդոց ո՛րչափ օգտակար և ո՛րչափ պատուոյ արժանի ըլլալը։

Ս. Պատրիարքն վանայ առաջնորդարանէն հեռագրով իմանալով, թէ տեղական կառավարութիւնն մեր ազգային-ները ի քաղաքային զինուորագրութիւն կսպիպէ, հարկ համարեր է հեռագրել առ կուսակալն վանայ, և ծանուցանել թէ ոչ-մահմետականաց քաղաքային զինուորագրութեան խնդիրն առայժմ յետաձգուած է բարձրագոյն հրամանաւ, և թէ՝ տակաւին և խորհրդակցութեան ենթարկեալ է։ Յետաձգման համար արդէն Բ. Դրնէն հրաման գացած է գաւառները. կկարծուի թէ վանայ կուսակալին ձեռքն ուշ հասած է այս հրամանը, կամ մոռցած ըլլալու է։

Կրօնական ժողովոյ երկուշաբթի աւուր նստին մէջ որոշուեր է՝ եպիսկոպոսական վկայագիր տալ Գալըքէսէրի առաջնորդ Սահրչեան դեր. Տիմոթէոս Ս. վարդապետի։ Արժանի է այս առթիւ՝ մինչև ցարդ մատուցած ծառայութիւններուն. սակայն մեք կառաջարկեմք, որ ժամանակ մը Ս. Էջմիածին ուղևորութիւնը եւս թողու, և բարեհաճի երթալ իր վիճակը ժողովրդեան քով, որ այժմ առաւել պէտք ունի իւր ներկայութեան և հովուութեան։

Ականատես, շաբաթ օրը մեր յիշած ու համառօտած

Պաշտօնական ծանուցում

«Քաղաքական ժողովին տօներու պատճառաւ քանի մը շաբաթէ ի վեր նիստ ըրած չըլլալով, երէկուան ըրած նստին մէջ հետևեալ յայտարարութիւնն ընել որոշեց։

«Կայսերական բարեխնամ կառավարութիւնը ներկայ պատերազմին տագնապներովը ղբաղած միջոցին՝ ըստ որում ընդհանուր բարեկարգութեանց կենսական խնդիրն ալ իւր մտածութեանն առարկայ ըրած է, Ամեն. Ս. Պատրիարք Հայրն այս առթիւ ևս տէրութեան և ազգին ծառայութիւն մը մատուցանելու խորհրդով, և բարեկարգութեան մասին Գետութեան բարձր պաշտօնէից դիւրութիւն և լոյս ընծայելու նպատակաւ, Ր. Դրան ներկայացնելիք զանազան խընդիրներու վրայ վարչութեան ուշադրութիւնը հրաւիրած էր։

«Այս մասին Ազգ. վարչութիւնն իւր կարծիքն ու որոշումը չտուած՝ մայրաքաղաքիս լրագիրներէն ոմանք առանց խնդրոյն հանգամանացը վրայ ճշդիւթ և հաւաստի տեղեկութիւններ ունենալու, զանազան գոյնով և իմաստով յօդուածներ հրատարակեցին, որ բոլորովին հեռի էին խնդրոյն էութենէն, և տեղի տուին այլ ընդ այլոյ տարաձայնութեանց ղորս Ազգ. վարչութեան գաղ. ժողովը պարտ կը համարի հերքել ներկայ պաշտօնական ծանուցմամբ յայտարարելով թէ թիւրիմացութեանց արդիւնք են։

21 յունվար 1878

Ամասիոյ ազգայնոց երևելիներէն և Սեբաստիոյ վիճակէն ընտրեալ օսմանեան երեսփոխաններէն ՄԵԾԱՊԱՏԻՒ Գէորգ Էֆէնդի փափազեան՝ շաբաթ օրը օսմանեան խորհրդարանին մէջ հետևեալ կարևոր առենախօսութիւնն արտասանած, և գաւառական այլևայլ ժողովոց մէջ տեղի ունեցած ղեղմանց վրայ ազդու և վառվռուն ոճով խօսելով՝ յայտնած է խորհրդարանին ուշադրութիւնը գրաւել, և ի նախաքննութիւնն յղել տալ։

«Էֆէնտիլէրիմիզ

«Փառիշահըմըզ վէլինիմէթը պիմինդէթիմիզ Գանոնը Լատսի թանզիմինէ միւսասատէ պուլյուրմըշ, վէ պունուն միւնտէրիճաթը ահգեամընճա հէր մէպուս քէնտու միւթէալասընը պէ յանէ սէրպէսթ պըրագըլմըշ ըսըր. աճիզլէրինին տախի էքսէր իֆատէլերի վար իսէ տէ՝ պաշլուճա մէմուրինլեր հագդընտա օլուպ՝ չիմտիլիք պէ յանը էֆքեար իթմէյի սարֆը նաղար իտէրիմ. չիւնքի րիւֆէքայի քիրամ էֆէնտիլէրին պու խուսուստա կէչէն սէնէ վէ պու սէնէ վէ էլէեվմ թէչէքքիլեր սէտասը արչա չըգմըշ ըսըր. պու ճիհէթլէ իւմիտի գավխէմիզ վար ըսըր քի, ինշալլահու թէալա չու եագդն կիւնլէրտէ տէվլէթիմիզէ վէ վաթանըմըզա խայըրլը օլարագ ղայիլէյի հաղըրէ մահվ օլտըգտա էվվէլ էմիրտէ քնաֆֆէյի մէմուրլէրին քսլահաթընա միւպաշէրէթ օլունաճագ.. զիրա թանզիմ օլունան նիզամաթ վէ գանունլերի մէմուրլէր տիր քի հիւսնի վէ եա սուչի իճրա իտերլեր. քեաղըտ իլէ միւրէքքէպին պիր չէյ եափամայաճաղը մալիւմ տիր. պու անէ տէկին չէքտիկիմիզ սեֆալէթ վէ տիւչար օլտըղընմըզ ֆէլաքէթլերին պիրինճի սէպէպի ճահիլ վէ նալայըգ օլան վալիլեր, վէ միւթէասարըֆլար վէ գայմագամլար օլտըղը ամմէյէ չէմա կիպի աչիքտար ըսըր։

«Վիլայաթ, սանճագ վէ գաղալերտէ օլ տէրէճէճ սույի մուամէլէ իճրա օլունմագտա ըսըր քի, չօդ տէֆիա հագուլայը հագսըզ վէ հագսըզը հագուը չըգարմայա պիր թէտպիր տիմէք օլտըղընտան՝ հիյէթը քիրամէ պիր աղ իղահաթէ մէճպուրըմ. չէօյլէ քի, մալիւմ օլտըղը իւզրէ, սանճագ վէ գաղա իտարէ վէ տաալի մէճլիսլերինտէ ումումի էհալի թարաֆընտան միւնթէխիպ տէօրտեր ազա պուլունուր, իտարէլերտէ տախի ալթը տա մէմուր պուլունուր քի, էքսէրիյէթ հէր հալտէ մէմուրլերտէ տիմէք տիր. պունուն իւզէրինէ պահս իթմէմ. զիրա պունա տայիր հիյէթի քիրամ ճանիզինտէն եէնի նիզամնամէլէր գալէմէ ալընմագտա օլտըղընտան՝ իլերուտէ նաղարը տըգգամ պուլրուլաճաղընա չիւպհէ օ-

ՀԱՅԿԱԿԱՆ ՂԱՖԼԱՂ

Ծանուցում Ղազախական վիտեցիների

Ղազախական վիտեցիների ընդհանուր ժողովը կայանալու է Ղազախում, Ս. Գևորգ եկեղեցու սրահում, Կիրակի, Մարտի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին։

Օրակարգ

1. Տեղեկագրութիւն Ընդհանուր Ժողովի։
2. Ընտրութիւն Վարչութեան։
3. Ընտրութիւն Ստուգիչ Յանձնաժողովի։
4. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ժողովի։
5. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Վարչութեան։
6. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
7. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
8. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
9. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
10. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
11. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
12. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
13. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
14. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
15. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
16. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
17. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
18. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
19. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։
20. Ընտրութիւն Ներկայացուցչի Ազգային Ատենի։

Ընդհանուր Ժողովի Նախագահ՝ Ա. Ղ. Ղազարեան

Ընդհանուր Ժողովի Քարտուղար՝ Ա. Ղ. Ղազարեան

Գրական Ընթերցարան

Ղազախական Վիտեցիների Ընդհանուր Ժողովի Նախագահ՝ Ա. Ղ. Ղազարեան

Ընդհանուր Ժողովի Քարտուղար՝ Ա. Ղ. Ղազարեան

Ընդհանուր Ժողովի Նախագահ՝ Ա. Ղ. Ղազարեան

Ընդհանուր Ժողովի Քարտուղար՝ Ա. Ղ. Ղազարեան

նութիւն ունի ընդունիլ զինադադարն երբ հաղորդուի իրեն։ կրնաք վստահ ըլլալ, թէ հաշտութեան համար ձեր վերահսկութեան ունեցած փափաքն ևս ալ ունիմ անկեղծօրէն։ Բայց, ինձ, և կրնամ ըսել թէ, մեղ՝ յարատև և հաստատուն հաշտութիւն մը պէտք է »։

— Ծիշեալ լրագիրն երկկ հաշտական պայմաններն հետևեալ կերպով չափած էր, ծանուցանելով թէ գիշերը ըստոյգ և հաւատարիմ տեղէ մը հաղորդուած է իրեն։

1· Բնակչաց մեծագոյն մասը պուլղար եղող տեղերը մէջ առնելով՝ Պուլղարիոյ համար իշխանութիւն մը կազմել։

2.– Պատերազմական հարկ վճարել Ռուսիոյ, կամ՝ նորա տեղ երկիր փոխարինել։

3.– Անկախութիւն և մաս մը երկիր տալ Րումանիոյ։

4.– Անկախութիւն տալ Սերվիոյ, և սահմանը ընդարձակել։

5– Նոյնպէս՝ Գարատաղ։

6.– Հերսէքլի և Պօսնայի մէջ բարեկարգութիւններ ընել։

7.– Նեղուցներուն խնդիրը կարգադրել՝ Աղեկսանդր կայսեր և Սուլթան Համիտի մէջ համաձայնութեամբ։

Կյաւելու պատիրէթ, թէ Բ. Դուռը առաջարկած է Ռեգրսպուրկի՝ նեղուցներուն խնդիրը հաշտական պայմանաց մէջէն դուրս հանել։

— Անգղիոյ կառավարութիւնը ուզեր է իմանալ Բ. Դրնէն, թէ հաշտական պայմանաց մէջ գաղտնի պայման մը կա՞յ. բայց դեռ պատասխան չէ տրուեր։

— Ռուսիա առաջարկեր է, որ դեսպանախորհուրդը հետմ գումարի, բայց Բ. Դրան կողմանէ դեռ պատասխան չէ տրուեր։

Կայսերական հրովարտակ մը հրատարակուեցաւ առջի օրը, որով մեծ–եպարքոսութեան պաշտօնը վերցուելով, Պաշ–վէքիլ (գլխաւոր նախարար) տիտղոսը սահմանուած է, և այս անգամ քնարուած է Ահմէտ–վէֆիդ փաշա՝ գլխաւոր նախարար և միանդամայն ներքին գործոց նախարար։

Սոյն հրովարտակը նոյն օրը կայսերական պալատան դիւանապետ Լէպիպ–ֆէնտիի միջոցաւ Բ. Դուռը գալով՝ տուաւ որական հանդիսիւ կարդացուեցաւ, և Ահմէտ–վէֆիդ փաշա բարձրաստիճան պաշտօնատարաց չնորհաւորութիւններն ընդունելէն յետոյ, մեծապարքոսի յատկացեալ թիկնապահներն ու չաւուշներն արձակեց, և իւր մէկ դործակատարին (աղա) հետ կայսերական պալատը գընաց իչնորհաւորութիւն։

Հետեւեալ գլխաւոր պաշտօնեաքաղութիւնք ալ եղան նոյն օրը։

Շէյխ–իւլ–իսլամ էֆէնտին, զինուորական, ծովային, արտաքին և գանձային դործոց նախարարք հաստատուեցան իրենց պաշտօնին մէջ։

Շուրայի–Տէվլէթի նախագահ կարգեցաւ՝ Սաֆվէթ փաշա։

Դատական դործոց նախարար անուանեցաւ՝ Խուրշիտ փաշա։

Թնդանօթարանի վերատեսուչ քնարուեցաւ՝ Նամըգ փաշա։

Հասարակաց կրթութեան (մէարիֆ) և բարեպաշտական հաստատութեանց (եվգաֆ) նախարար կարգեցաւ՝ Սուպհի փաշա, երկու պաշտօնները միանալով։

Հասարակաց շինուածոց և առևտրական դործոց նախարար անուանեցաւ Թովհաննէս էֆէնտի, երկու պաշտօնները միանալով։

Ահմէտ Բահիմ փաշայի յանձնուեցաւ՝ Պօլսոյ քաղաքապետութեան պաշտօնը։

Իզմիրի կուսակալ քնարուեցաւ՝ Նախորդ մեծեպարքոս Համտի փաշա։

Սիրիոյ կուսակալ անուանեցաւ՝ Ձեվտէթ փաշա։

Սերասքիոյ կուսակալ կարգեցաւ՝ Գատրի փաշա։

Գլխաւոր նախարարի խորհրդական քնարուեցաւ՝ Ներակուսի անդամներէն Էմին պէյ։

Կայսերական դանձուն (խաղինէի խասսա) վերատեսչութեան պաշտօնք՝ ներքին գործոց նախորդ նախարար Սայիտ փաշայի յանձնուեցաւ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Լօնտրա. 1 փետր։ —Այսօր երեսփոխանական ժողովոյն մէջ արտաքին գործոց նախարարի խորհրդականք՝ անդղիական նաւատորմիղին չարժման պէտքը ծանուցանելէն յետոյ, ըսաւ թէ Անգղիոյ նախարարութեան կողմանէ յաւելուածական վարկ պահանջուելուն նպատակն է՝ ազդեցութիւնը աւելցունել, և ո՛չ միայն իր այլ և բոլոր Եւրոպիոյ չահերն պաշտպանել։ —Երկուչաքթի աւուր ձգուեցաւ՝ վիճաբանել այս խնդրոյն վրայ։

2 փետր։—Թէև զինադադարն ստորագրուած է, բայց նախարարութիւնը դարձեալ կպնդէ որ ազգային ժողովը հաւանութիւն տայ պահանջուած գումարին համար։

Ռուսիոյ ընթացքն երևան ելած է՝ արևելեան խնդրոյն վրայ հրատարակեալ քաղաքական գրութեանց միջոցաւ։

Աթէնք. 31 յունվ։ —Ազգային ժողովն 121 քուէով ընդդէմ 61 ի վստահութիւն յայտնեց նախարարութեան համար, և՝ կատարեալ արտօնութիւն տուաւ՝ Յունաստանի չահուց պահպանման համաձայն չարժելու համար։

1 փետր։—Կառավարութիւնը հրամայեց, որ 12000 զօրք վաղը սահմանն անցնի։

Փարիզ. 2 փետր։ —Կհաւատան, թէ Աւստրիոյ կառավարութիւնը մօտերս չարժման վիճակի մէջ պիտի դնէ զօրքը։

Վիէննա 30 յունվ.—Կէս–պաշտօնական լրագիրք Աւստրիոյ և Անգղիոյ չահուց համանմանութեան վրայ կխօսին։

Ե–ՐՈՊԱ ԼՐԱԳԻՐՆԵՐԷՆ՝

Լոնտ. 29 յունվ։ —Մօրնինկ–Բօսթ կէս պաշտօնական լրագիրն կդիտէ, թէ լրագրաց մէջ հրատարակեալ հաշտական պայմանք՝ Ռուսիոյ զինուորական արտաքոյ կարգի պատրաստութիւնները ծածկելու համար երևան հանուած են։ Թայմզ ալ Պերլինէն հեռագիր մը առեր է, յորմէ կիմացուի թէ Գերմանիոյ կառավարութիւնը երկրորդ անգամ ծանուցեր է Ռուսիոյ՝ հաշտական պայմանաց եւրոպական կառավարութեանց կողմանէ վաւերացուելու պէտքը։

Նիւ–Եօրքի մէջ Անգղիոյ համար արմըտեաց բաղմաթիւ պայմանագրութիւնները եղած են։

Անգղիոյ զինուորական պաշտօնատան մէջ յատուկ յանձնաժողով մը կը հոգայ նաւատորմին պիտոյքը։ Միլիերկրականի անգղիական չոգեմարանք լի են զինուորական ամենայն պիտոյիւք, ըստ տեղեկագրի յանձնաժողովոյն։

Պերլին. 25 յուն։ —Պերլինի և Բեռլբուպուրկի մէջ յարաբերութիւն կտիրէ՝ պօլսոյ վրայ Ռուսաց յառաջ խաղալէն հետե։ Գերմանիոյ կէս–պաշտօնական լրագիրք մեղադրելով Ռուսաց ընթացքը՝ գերմանական չահուց միշտ ընդհակառակ կհամարին Ռուսաց մինչև այս աստիճան յառաջանալն։ Պերլինի լրագիրք Անդղիոյ երկդիմի քնթացից վրայ ալ գրելով՝ զԱնդղիա արևելեան խնդրոյն երևան ելնելուն և այս վիճակին հասնելուն գլխաւոր պատճառ կհամարին։ Վիէննայէն Պերլինի բօսթ լրագրոյն հեռագրեր են, թէ Անդրասի կոմսը կընդդիմանայ Ռուսաց Պօլիս մտնելուն, և թէ՝ մինչև իսկ կդիտէ որ Ռուսիա Լոնտոնի Բրօթօգօլն ալ գործադրել տալու արտօնութիւն չունի։

Վիէննա. 27 յունվ։ —Ի ծածուկ Աւստրիոյ հաղորդուած հաշտական պայմանք խիստ ծանր են, և շատ կէտերու մէջ Աւստրիոյ չահուց կդպչին։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
23 Յունվար 1878

Փօնսօլիտէ			9–38
Սօսիէթէ ժէնէրալի բաժինք	նգ. լիր.		5–15
Քրէտի »	»	Օսմ. »	5– 5
Երկաթուղեաց՝	»	ֆր.	51–
Թրամուէյ		Օսմ. լիր.	90
1865ի փոխառութիւն		ֆր.	47–
1865ի »		»	48–
1869ի »		»	45–
1872ի »			22–

ԴՐԱՓ, Օսմ. լիրան 100էն

Մէճիտիյէ	107–	Րուսիոյ բօլ	88–50
Մէճտալիք	119–20	Գաղղ. լիրա	87–
Պրինձ	180–	Անգղ. »	109–10
Թղթադրամ	275–	Գրիմից	30–10

ՎԱՃԱՌԱԿԱՆ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԹԱՐՄ ՊԱԴԱՍԻՄԱՏԻ
կ. պոլիս Ֆընճանճըլար–Եօխուշու Ամերիկայ խան
Բն– 27
Ղալաթիա Եւրոպական փողոցի Բն– 51

Ամերիկայ պագասիմատի արհեստին մէջ համբաւաւոր հանդիսացող Ց. Գ. Ճգնաւորեան կը պատրաստէ Եւրոպայի կերպով, այսինքն շաքարով, իւղով և կաթով չինած աներևոյթ պագասիմատները, նախաճաշի և թէյի հետ միասին խիստ անուշահամ ուտելիք մը և մանկանց ու հիւանդաց համար ախորժելի և սննդարար ըլլալով։ Նաև Եւրոպացին եկածներուն վերայ նախամեծար կը ձեպուին իրենց թարմութեան և գնոյն աժանութեան մասին։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՍԻՐԱՔ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ
ԲԱՐԻ ՀՕՐ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԵՐ
ԳՐԵՑ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՑՐԻԿ
Եւ ի յոյս ընծայեցին ազնուական եղբարք
ՑՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՄԿՐՏԻՉ ԷՍԱՅԱՆ
Ի ՆՈՒԻՐ
Հայոց հարց եւ զարգացեալ որդւոց
կծախսուի ամեն գրավաճառաց քով, ի գին մէկ քսանոց թղթադրամ։
Ց. Խրիմեան Սրբազանի այս գործին ընթերցման համար մեր կողմանէ յանձնարարութիւն և յորդոր աւելորդ կհամարիմք· տարակոյս չունիմք, թէ Նորին Սրբազնութեան սոյն օգտակար դպրն աշխատասիրութիւնն ալ հասարակաց պարտ ու պատշաճ ընդունելութեան պիտի արժանանայ։

ԹԵՍԱԼՐՈՍԻ
ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Այս պատուական գիրքը այս անգամ

ընորհիւ գեր. Խորէն եպիսկոպոսի Մխիթարեան գրաբարէն համառօտութեամբ աշխարհաբարի թարգմանուելով իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայեցաւ մաքուր տպագրութեամբ, ցուսալի է որ այս անմահ գործը մեծ ընդունելութիւն պիտի գտնէ ազգային վարժարաններէն և ընթերցասէր հասարակութենէն։

Գիրքը կազմեալ 316 երեսէ բաղկացած ըլլալով կը վաճառի Եէնի–ճամի Զիլինկիրլեր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և եաղմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 3 ֆրանք

ԹՈՐՈՄ ԼԵՒՈՆԻ
Գրեց Ծերենց

Սոյն գեղեցկահիւս վիպասանութենէն՝ ոյն պատմական աղբիւրը Ռուբինեան հարստութենէն առնուած է, և որ Քրիստոսի 1145 թուականին Հայոց Կիլիկիոյ մէջ վերստին ձեռք բերած իշխանական մեծութեան ճշգրտատիպ պատկերն է, ամեն հայ պէտք է փութայ մի օրինակ ունենալ։

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԿՂԶԻ
ԸՆԿԵՑԻԿ ՄԱՐԴԸ

Ժիւլ Վէրն անուանի հեղինակին սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործին երկրորդ հատորն ալ իզմիրէն հասած ըլլալով, կը ծախուի Եէնի–ճամի, Զիլինկիրլեր–ճատտէսի, թիւ 2, Ս. Ղ. և եաղմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։

ԹԱՏՐՈՆ ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ
ԲԱԶՄԱՊԱՏԿԵՐ

Տղայոց ընթերցանութեան յատկացեալ այս հանդէսը՝ որ աշնիւ Թղթոյ վրայ բաղմաթիւ պատկերներով գեղեցիկ և վայելուչ տպագրութեամբ ի լոյս ընծայուած է, կը պարունակէ բարոյական հրահանգիչ և ղուարճալի նիւթեր։

Սոյն գործին տարեկան 24 թերթերը ամբողջապէս կազմուած, կաղանդի նուէրի համար ամենէն յարմար և պատուական առարկայ մ՝ըլլալով, սոյն նպատակին ծառայեցնելու համար ալ՝ գործոյն ստուարութեանը նայելով՝ գինը ամենաչնչին գումարի մը՝ այն է 1 ֆր. 30 սանդիմի՝ կամ որ նոյն է 6 ղրչ. մէճիտիէ դրամի իլած է, և կը ծախուի փարիզու գրատունը և ամեն գրավաճառաց քով։

ԽՈՐՀՈՒՐԴԲ ՀԱՆԴԻՍԻ
ԱՐԱՐՋԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՑՆ
Ցեղ ի գրաւոր բան
Գիրս Գ. Բէբէոպէճեան
ԳՈՐԾ ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Տպագրութիւն Արամեան
1878

Սոյն դուզնաքեայ երկասիրութիւնը՝ որ 32 երեսէ կը բաղկանայ՝ նիւթոյն աղնուութեանը գրաբառ սահուն ոճոյն և աղբի աղբի գողտրիկ լմաստիցն համար՝ կաղանդի նուէր և Մրցանակաբաշխեան համար մէկ հատիկ արժանաւոր պարգև համարուած և արդէն սպառած է։

Այս անգամ Ն. Բարձրաչնորհ Սրբազնութեան անուան պաշտպանութեամբն հովանաւորեալ, Արամեան մատուռը տպագրութեամբ և աւելի գեղեցիկ դերքով՝ թարգմանչէն խնամով ուղղեալ և ինչ ինչ ի կարևորաց յաւելեալ ի լոյս կընծայուի Ասիական բարենախանձ ընկերութենէն նորահաս ուսանողաց համար, այնու քաղցր ակնկալութեամբ որ անշուշտ սոյն Բ. տիպն ալ առաջնոյն բախտին պիտի արժանանայ, հայկական գրա-

ւոր լեզուին վսեմութեանը վրայ ճաշակ ունեցող նորատի ուսանողներէն։

Գինն է 3 դահեկան ողջ թղթադրամ։

Դպրոցաց կաղանդի նուէրի համար մանաւոր զեղչ կըլլայ։

Կեդրոնատեղին է գրատուն փարիզու Զագմագ ճըլար եօգուշու Յակոբեան խան թիւ 13։

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով։

ՍՈԿՐԱՏԻ ՈԳԻՆ
ՐՕՍԻ ՏԸ ՃԻՒՍԹԻՆԵԱՆԻ

Ողեկանութեան (սբիրիթիզմ) վրայ գրուած սոյն կարևոր գործը որ Պ. Ց. Սվաճեանէ թարգմանուած և իզմիրի Աբզալա Աբտապեանի տպարանէն ի լոյս ընծայուած է, նոյնպէս կը ծախուի Եէնի–ճամի Զիլինկիրլեր–ճատտէսի, թիւ 2, Ս. Ղ. և եազմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 25 սանթիմ։

ՕՐԱՑՈՑ ՊԱՐԶ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ
1878
ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Ցօբինեալ
յերեմիա Քահանայէ Խասգիւղի
Գարունակութիւն ընդարձակին

Օրացոյց պարզ.

Ազգ. Հոդեւոր գլուխ, և ընդհ. ժողով.

Ազգ. վարչութիւն կրօնական՝ և քաղ. ժողով։

Ազգ. զանազան ժողովք. խորհուրդք, և հոգաբարձութիւնք.

Սկիզբն օսմանեան Տէրութեան.

Օսմանեան կայսր և կայսերազունք.

Բարձրաստիճան նախարարք Տէրութեան.

Հայազգի պաշտօնատարք ի Բ. Դուռն.

Թիւ մարդկան ընդ ամենայն երեսս երկրի.

Թիւ աղգիս Հայոց.

Արժէք դրամոց զանազան աղգաց.

Մշտնջենաւոր աղիւսակ գիւտի աւուր ամսամտի.

Համեմատութիւն Եւրոպիոյ և Տաճկաստանի ժամուց և բոպէից։

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով, գարչ 60 փր. Ընդարձակ 3 ղչ։

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ
Վ. ԾԱՆՆԻ
Բերա Մեծ փողոց Ադաճամիի բիւ 77
Ե Ի
կ՝ Պօլիս Կամուրջի հրապարակը բիւ 1—2
Եւրոպիոյ առաջին գործարաեաց հետ յա-

բարերութեամբ կապուած, և իւր դեղորէի ընտրութեամբն և դնոց չափաւորութեամբ հրաչակուած։

Մակի մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին չինած Ֆն. լաթընէյն, որ փոքրիկ ոչխ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ անդադար ուտելիքն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած։

Հոն կը գտնուի նաև։

Ֆառֆէ (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտրուի։

Սիճֆէլ որ Քինին, ղուտ և մաքուր, Բէլթիէ, Տիոպօսք, ժօպսթ և Լվանս Լէղէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած։

Զկան ձուկ, ղուտ Քրիսթիանայի Բէթիկեր Մէլաերի գործարանէն ելած։

Եէբդէ (հինտիպա) խոհուէ, Լուտվիսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող որ հաորակ խահուէի հետ խառնելով գինը մեծապէս կիմեցնէ առանց համն ու հոտը փսխելու։

Աբոնէպաման սահայ ամեն ժամու մէջ։

Տիւժենի Ջոբ, մազերու անվրիպելի ներկ։

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏԻԿ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև Լղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Արտ և երիկամանց վրայ օգտակար աղդեցութիւն մ՝ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական դործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուժութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կաղեր, դլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրելով բոլոր այն աղտեղութիւնները՝ որ շատ անդամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կդգենու։

ONGUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Մորթոյին հիւանդութիւնք և վէրք բուժելու մասին ունեցած պալատական յաջողութեանցը չհաւասարիր ընաւ ուրիշ գեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնչէ), սրունից և ստեռնց վէրքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հաղի, սրտի բաբախման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սբրաճա) հիւանդութեան ազականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մանաւորապէս Պտհճէ–գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապետնի դեղարանը՝ նօ. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն աջքոր Հոլլօուէյ ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց թիւ 533։

ՊԱՏՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ԶՈՐԵՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ կանխիկ վճարելի Թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և Թէ գաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու գաւառական Թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5.—Հատը 60 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութներէն և ձեռքէ ծախողներու քով։

6.—Փոխանցման տոդը 3 ղրուշ է մէկ անդամի համար։ Աւելի ածան կըլլայ աւելի անգամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է դիր ուղղելի առ Տնօրէն–Տէր Հ. Ս. Ալամաճեան, կ. Պօլիս Ալաճա–Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19։

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԻՐ
Հ. Ս. ԱԼԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Բիզա փաշա խան բիւ 3